

Պ Ա Ճ Տ Օ Ն Ե Կ Ա Ն Ք

ՔԱՂԱՔԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ:

4 Նոյեմբերի 10 օրը կողմից կարգւումէ 0շական գիւղի կառավարիք վաղարշապատցի Մեխակ Երամեանցը, որին և տրումէ նոտարական կարգով հաւատարմաթուղթ, որ պահանջել կարողանաց յիշեալ գիւղի բնակիչներից աթուահաս տուրքերը 1891 թուի:

4 Նոյեմբերի 10 օրը լսեցին զեկուցում՝ որ Առողք Էջմիածնի Միաբան Սահակ վարդապետ Բաղդասարեանցը հանապազ վարում է արքշիռ կեանք, գայթակղութիւն պատճառելով միաբան եղբայրներին և չար օրինակ լինելով ուրիշներին, այլ և անսաստ է մնում զը լսելով Ամենապատիւ Տէր Տեղակալի պատուէրներին ու խրատներին և յաճախակի ինքնակամ բացակայումէ վանքից, առանց որ և է մէկին յայտնելու իւր գնացած տեղը, այսպիսով արատ է բերում հոգեորականների բարձր և վտեմ կոչմանը. ուստի Հքամայէցին. Սահակ վարդապետ Բաղդասարեանցին արձակել Ա. Էջմիածնի վանքի Միաբանակցութիւնից և առաքել Աւանայ վանքը, որ այնտեղ մնայ մինչև նոր Հայրապետի գահակալելը և այնուհետև զեկուցանել ընտրելի Քահանայապետին յիշեալ վարդապետի բոլոր տգեղ վարմունքները ի պատշաճական տնօրինութիւն։ Այս մասին յայտնել Աւանայ վանքի բարեշնորհ վանահօրը պատուիրելով նրան հոգալ Սահակ վարդապետի մնունդն ու հանգերձեցնը հաւասար միւս միաբանների և հանապազ խիստ հսկողութեան տակ պահել նրան։

4 Նոյեմբերի ա) Գերապատիւ Գրիգոր Եպիսկոպոս Աղավիլիքեանցը արձակուելով Ագուլեաց Ա. Թովմայի վանքի վանահայրութիւնից՝ կարգւումէ առժամանակեաց կառավարիչ Նոր-Նախիջևանի և բեսարարիացի թեմի. բ) Արժանապատիւ Յուսիկ վարդապետ Մովսիսեանը արձակուելով Թիֆլիսի կոնսիստորիայի անդամութիւնից, Ա. Սարգսի վանահայրութիւնից և Թիֆլիսի Աթուապատկան կա-

լուածների կառավարչութիւնից, նշանակւումէ քիշնեի կոնսիստորիայի անդամ և Աթոռապատկան կալուածների կառավարից, փոխանակ չամազասպ վարդապետի: գ) Արժ. չամազասպ վարդապետը նշանակւումէ թիջլիս Յուսիկ վարդապետի տեղը, մի և նոյն սպաշտօններով: դ) Արժ. Պետրոս վարդ. Արյաղեան նշանակւումէ Ագուլիս, Ա. Թովմայի վանքի վանահայր: Գերապ. Գրիգոր Սրբազնի առժամանակեայ Թեմական կառավարիչ նշանակուելու մասին ծանուցանել կովկասի պ. կառավարչապետին:

4 Նոյեմ. Աինօդում լսեցին Երևանի Թեմակալի փոխանորդ Գեր. Գրիգոր Եպիս. Գառնակերեանցի յայտարարութիւնը, որով միջնորդումէ կարգել բարեշնորհ Նահապետ արեղայ Նահապետանցին կարս քաղաքի յաջորդ: Հըամայեցին. յարգելով Սրբազն թեմակալի փոխանորդի միջնորդութիւնը, կարգել Նահապետ արեղային կարուց վիճակի յաջորդ 800 ռուբլի ռոռնկով, այլ և 150 ռուբլի ընակարանի վարձ, տալով նաև 50 ռուբլի ճանապարհածախոս:

8 Նոյեմ. Աինօդը որպէս տեղեկանումէ լրագրերից, Առևտաստանի ներքին քսան նահանգների ընակիցները տանջւումեն սովից, և ամեն կողմից կարկառուումէ դէպի նրանց օգնութեան ձեռք, ուստի Հըամայեցին. որառուիրել Առևտաստանի բոլոր կոնսիստորիաներին և հոգեւոր կառավարութիւններին յորդոր կարդալ հայ ժողովրդին, որ մարդասիրաբար մասնակից լինին նուիրաբերութեան յօգուտ ռուս սովատանջ ժողովրդի: Ժողովուած դրամները արձանագրել ժապաւելնեալ մատեաններում և հացնել ուր անկ է, և արդիւնքի մասին յայտնել Աինօդին:

8 Հոկտ. Աինօդում զեկուցուեց. Հանգուցեալ Հայրապետի Կոնդակի (30 նոյեմբ. 1887 ամի, թ. 598) համաձայն Աինօդս օրագրով (7 դեկ. 1887 թ.) կարգեց Պետրոս Աիմէռնեանցին մշտնջենաւոր գործակից խմբագրի «Արարատ» ամսագրի տարեկան 600 ռուբլի ռոռնկով: Կաթուղիկոսի մահից յետոյ պ. Աիմէռնեանցը 29-ին ապ-

րիվ յայտնումէ Սինօդին գրով թէ. «Ի Տէր Հանգուցեալ Հայրապետն Ազգիս և հոգեւոր հայրն իմ Տ. Մակար հրաւիրելով ինձ Ա. Ա.թոռս կաբգեց գլխաւոր գործակից «Արարատ» ամսագրոյ: Դաւնագոյն մահուամբ Նորին Արքութեան ըստ իմ կարծեաց, գաղարումէ և իմ ստանձնեալ պաշտօնս, որոյ գործադրութիւնն անմիջապէս կախուած էր Նորին Օծութեան վստահութիւնից: Այժմ Արքազան Սինօդիդ կը մնայ առնել տնօրէնութիւն ապագայի համար ըստ այսմ առարկայի: Լոելով Սինօդը այս յայտարարութիւնը՝ յունիսի 24-ի օրագրութեամբ վճռեց՝ թէ Հանգուցեալ Հայրապետի կոնդակի համաձայն կարող է պ. Պ. Սիմ. նաև այսուհետեւ շարունակել իւր պաշտօնը: Այս օրագրին ստորագրեցին Առքիսա, Ներսէս և Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսները: Աակայն, որովհետեւ այդ օրագրութիւնը չէր հաստատուած Տ. Տեղակալի ստորագրութեամբ՝ Պրոկուրորի պաշտօնը կատարողը Ա. Փիլիսպոսեանց վերագարձրեց օրագիրը յայտնելով իւր անհամաձայնութիւնը նոյն ամսի 26-ի գրութեամբ: Յուլիսի 12-ին նոր ստանձին օրագրութեամբ որոշուեց առաջին օրագրութիւնը ստորագրողների կողմից, ձայների առաւելութեամբ ի կատար ածել պրոկուրորի անհամաձայնութեամբ վերագարձրած օրագիրը, մի օրինակ այս վճռական օրագրից ուղարկելով Նորին Գերազնութեան (պրոկուրորին): Առաջ քան այս որոշման կատարումը Սիմէռնեանցը յունիսի 20-ին ինդրել էր Սինօդից տալ իրեն քառամսեայ արձակուրդ Թիֆլիս գնալու բժիշկներին այցելութեան, յայտնելով որ չորս ամսուայ Արարատին նիւթ յանձնել է խմբագիր Արքազանին (Ա.րիս. Եպիս. Դաւթեան): Նոյն յունիս ամսու 22-ին պ. Սիմէռնեանցը մասուցանումէ Սինօդին նորից մի յայտարարութիւն, որի մէջ առուած է. «Ուր հասաւ ինձ, որ Ա. Սինօդդ 21-ին ամսոյս խօսք բանալով իմ յայտարարութեան մասին ի 20-էն ամսոյս՝ մերժել է ինձ ինդրած արձակուրդս տալու: Երջանկայիշատակ Մակար Հայրապետից 1887 թուականին Ա. Էմիրածին հրաւիրուեցայ «Արարատ» ամսագրի խմբագրութեան համար և գրութեամբ Սինօդիդ ի 19-էն գեկտեմբերի նոյն 1887 ամիս համարաւ 4758, համաձայն մոտացրատառ կոնդակի հանգուցեալ Հայրապետի կարգեցայ ի մշտին-

ջենաւոր գործակցութիւն «Արարատի» խմբագրութեան; Ես հնագանգելով կամաց Նորին 0 ծութեան՝ Հայրապետին ամենայն Հայոց եկայ և ոչ մի այլ պայման չեմ առաջարկած բացի այն, որ յօդուածագիրների աշխատանքը վարձատրուի առ իւրաքանչիւր տպագրական թերթը 25—40 ռուբլի վճարելով, որի համար ծախք պիտի լինէր տարեկան 1200—1500 ռուբլի, իմ պարտականութիւնս էր իսկապէս յօդուածների ընտրութիւն անել, խմբագրել նրանց, գասաւորել, կազմել այսպէս իւրաքանչիւր ամսատեսքը: Բայց ես ցանկանալով իմովսանն թեթեացնել Մայր Աթոռոյս վերոյիշեալ ծախքը «Արարատի» վերայ, կամաւորապէս աշխատել եմ երեք ու կէս տարուայ ընթացքում իմ գրուածքներով հոգալ «Արարատի» նիւթերի գրեթէ կիսից աւելին, առանց գորա համար առանձին վարձ առնելու, որով յօդուածների վարձատրութեան ծախքը երբէք տարեկան 500—600 ռուբլից անցած չէ: Այդ աշխատանքի ծանրութիւնը ճնշել է ինձ, և ես բազմիցս ստիպուած եմ եղել երթալ Թիֆլիս առողջութիւնս կազդուրելու համար հմուտ բժիշկների օգնութեամբ և հանգուցեալ Հայրապետը երբէք արգելք չէ զրել գրան, միայն պատուիրելով, որ հոգամ «Արարատի» կանոնաւոր հրատարակութեան մասին, ուր էլ լինիմ: Ա. Սինօդից ստացել եմ միշտ անցաթուղթ և վկայագիր առանց արգելքի: Այժմ երբ հարկ եմ զգում կրկին դիմելու հմաւր բժիշկների օգնութեան, յը գիտեմ ի՞նչ մարդապիրական զգացմունքից թելաղրուած Ա. Սինօդդ արգելք է դնում առաջո խանգարուած առողջութիւնս վերականգնելու, կարծես պատուիրելով ինձ անձնատպան լինելու, որ երբէք յանձ առնուլ չեմ կարող, համարելով այն ընդգեմ ամենայն մարդկային և Աստուածային օրինաց, որոնք իւրաքանչիւր մարդու վերայ պարոք են դնում խնայել կենաց իրրե Աստուածային պարգեի: Արդ ս. Սինօդիդ իմ վերաբերութեամբ այժմ բռնած զիրքը բռնադատումէ ինձ յակամայիցու, հակառակ ցանկութեան երջանկայիշատակ Հայրապետին, որ իւր սրբատառ կոնդակով կամեցել է ինձ մշտապէս կապել Ա. Աթոռոյս և «Արարատի» հետ, խոնարհաբար խնդրելու, որ Սինօդդ բարեհաճի բոլորովին արձակելու ինձ ստանձնածս պաշտօնից և

տալ ինձ մի վկայական երեք ու կէս ամեայ ծառայութեանս համար, որ իմ միակ վարձատրութիւնս կը լինի և մի անցաթուղթ, որ ես գնամ ու հոգ տանեմ մարմնաւոր առողջութեանս, որոյ համար երբէք ծանրացած չեմ Ա. Աթոռոյս գանձարանի վերայ, պարոք եմ համարում յարակցելու, որ «Արարատի» առաջիկայ յուլիսի համարը արգէն պատրաստ է և օգոստոս, սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսների համարների նիւթերն էլ դասաւորած կը յանձնեմ Արբազան խմբագրապետ հօր, որպէս զի Ախնօդդ քժուարանայ և ի դէպս արձակմանս ժամանակ ունենայ «Արարատի» ապագայի համար հոգալու։ Այս յայտարարութիւնը լսելուց յետոյ Ախնօդի վերոյիշեալ անդամները, առանց օրագրի տալիս են արձակուրդ եռամսեայ ժամանակով, յունիսի 24-ից: Սեպտեմբերի 24-ին ար Ախմէոնեանցը նորից ուղարկումէ Ախնօդին յայտարարութիւն և բժշկի վկայական խնդրելով՝ երկարել իւր արձակուրդը անորոշ ժամանակով մինչև «ի կատարեալ բժշկութիւն անձին»։

Այս զեկուցումը Ախնօդում լսելուց յետոյ Տ. Տեղակալը յայտնեց, որ Պետրոս Ախմէոնեանցի Ապրիլի 29-ի յայտարարութիւնը ստանալու և Ախնօդում վերոյիշեալ օրագրութիւնը կազմելու ժամանակ, որով Ախմէոնեանցին իրաւունք էր տրում շարունակել իւր պաշտօնը խմբագրութեան մէջ, ինքը ոյն կարծիքն է յայտնել՝ որ որովհետեւ Ախմէոնեանցը հանգուցեալ Հայրապետիցն է կարգուած պաշտօնում, վասն որոյ Ախմէոնեանցի Ախնօդին տուած յայտարարութիւնը և նոր օրագիր կազմելը բոլորովին աւելորդ և անտեղի են։ Այդ օրագիրը գեռ չկազմուած Ախմէոնեանցը էլի մի նոր յայտարարութիւն տուեց Ախնօդը՝ խնդրելով Թիֆլիս գնալու արձակուրդ։ Ես կարեօր գատելով նրա մնալը պատուիրեցի ըշեռանալ, առաջարկելով մինչև իսկ, որ եթէ իսկապէս հիւանդութիւն պատահի, կուզարկեմ նրան Յիւրական հոգալով բոլոր կարմեր ծախսերը։ Խակ երբ նա, չանսալով իմ հրամանիս և ընդ հակառակը արձակուրդի թուղթ առնելով Ախնօդից եկաւ ինձ մօտ հրաժեշտի, յայտնեցի իրեն, որովհետեւ գուք հակառակ իմ պատուէրիս հեռանումէք այստեղից, ուստի և ես այսուհետեւ չեմ

ճանաչում ջեղ գործակից «Արարատի» խմբագրի, և այժմէն իսկ համարում էք արձակուած պաշտօնից:

ՀՅԱՄԱՅԵՑԻՆ, որովհետեւ Տէր Տեղակալը արձակել է պ. Պետրոս Սիմէռնեանցին «Արարատի» խմբագրի գործակցութեան լաշտօնից, նոյն իսկ այն օրից, երբ յիշեալ պարոնը՝ անունկնդիր գրանուելով նորին Ամենապատութեան, որի իշխանութեան տակն էր գտնւում, պատուէրին, ինքնագլուխ մեկնել է Էջմիածնից, ուստի համարել նրան արձակուած նոյն իսկ այդ մեկնելու օրից, և թէև յիշեալ պարոնը շարունակել է ապօրինաբար ստանալ ոռօնիկ յուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին, ցմէկն հոկտեմբերի, այդ ապօրինի ստացած փողերը թողնել անպահանջ: Այս օրագրութեան կատարման հրամանը տալ Վանական կառավարութեանը և Տպարանական ժողովին: (Բոլոր վեց անգամների ստորագրութիւն¹):

1) Այս օրագրով «Արարատի» խմբագրութիւնը նորից մտնումէ օրինական սահմանների մէջ: Որպէս զի ընթերցողները լաւ ըմբռնեն գործի էութիւնը, աւելորդ չենք համարում պաշտօնական աղբիւրներից քաղած մի քանի պարզաբանող տեղեկութիւններ հաղորդել: Գէորգ Դ. Կամուղիկոսի և Կովկասեան Փոխարքայի դիւնատան գրագրութիւններիցը 1868 թուի, (№ 3105) երեսումէ, որ «Արարատ» ամսագրի թէ գրաքննիչը և թէ պատասխանատուն ինքը Կամուղիկոսն է: Մի քանի տարի անցած, երբ ուս կառավարութիւնը մտագիր էր գրաքննչութեան ենթարկել և «Արարատը», Կովկասեան Փոխարքան յարգելով Գէորգ Կամուղիկոսի միջնորդութիւնը յետէ կանգնում «Արարատը» գրաքննչութեան ենթարկելու մտքից, այն պայմանով, որ ինքը Կամուղիկոսն համարուի վերահսկող քննիչ և պատասխանատու «Արարատի», իսկ Կամուղիկոս չեղած ժամանակ՝ այդ պաշտօնը կատարէ Սինօդի Նախանդամը (Տեղակալը) համարուելով պատասխանատու անձամբ (լիով): 1883 թ. գործերից երեսումէ, որ պրոկուրորի բացատրութեամբ, վերեսում յիշուած գրագրութեանց հիման վրայ, Տեղակալին է յանձնուում «Արարատի» գլխաւոր ղեկավարութիւնն ու պատասխանատութիւնը: Այս բոլորը կարող էին անծանօթ լինել դուրս, բայց պաշտօնապէս յայտնի էին թէ Սինօդին և թէ «Արարատի» խմբագրութեանը: Բայց ինչպէս յայտնի է Մակար Կամուղիկոսի մահից յետոյ սկսուեց անիշխանական խլրտումն Մայր Աթոռում: մասնաւորապէս Սինօդում: ուր օրինական իշխանութիւնը յանձին Ամենա-

8 Նոյեմբ. Աշտարակի գործակալ բարեկրօն Ներսէս քհ. Գիւլ-նազարեանցը արձակւումէ գործակալութեան պաշտօնից, որովհետեւ շատ զբաղուած է՝ հովուելով երկու քահանայի ժողովուրդ և լինելով միանգամայն կրօնուոյց արքունի տարրական գալոցում։ Նրա փոխանակ կարգւումէ գործակալ Բիւրականի բարեկրօն թովմաս քահանայ Աղուանեանը։

8 Նոյեմբ. «Արարատ» ամսագրի Խմբագրութեան գործակցի պաշտօնից արձակուած լինելով պ. Պետրոս Սիմեոնեանցը, նշանակւումէ նոյն պաշտօնում Մայր Աթոռի միաբան բարեշնորհ Դպիր Գալուստ Տէր Մկրտչեանը։ Այդ մասին առանձին հրամանագրութեամբ յայտնել թէ յիշեալ բարեշնորհ Միաբանին և թէ Արարատի խմբագիր Գեր. Արիստակէս Եպո. Դաւթեանին։

պատիւ Տեղակալի չէր ճանաչւում մի քանի անդամներից։ Ի թիւս ուրիշ ապօրինի գործողութեանց՝ ամեն ջանք գործ դրուեց նաև «Արարատը» դարձնել մի օրդան նոյն իսկ ընդդէմ օրինական իշխանութեան Տեղակալի։ Տէր-Տեղակալը զգուշացրեց «Արարատի» պ. գործակցին (Սիմեոնեանցին), որ այդպիսի ընթացքի մէջ չը գտնուի։ Պ. Գործակցի անուղղակի պատասխանն եղաւ ուղղուած Տեղակալի դէմ։ Նրա յայտարարութեամբ խոստովանեումէ պ. Սիմեոնեանցը, որ «իւր ստանձնած պաշտօնի գործադրութիւնը անմիջապէս կախուած էր նորին Օծութեան վստահութիւնից»։ Աւեմն, երբ նորին Օծութիւնը չը կար, պ. Սիմեոնեանցը պիտի դիմէր նորին Օծութեան Փոխանորդի վստահութեանը և կամ հրաժարուէր իւր պաշտօնից, Անցեալի գործադրութիւնը (պրակտիկա) և Կովկասեան Փոխարքայութեան ու պրոկուրորի գրադրութիւններն ու բացատրութիւնները շատ բացորոշ էին, թէ ո՞վ է «Արարատի» պատասխանատուն և վերահսկողը։ Զը նայելով այս բոլորին, պ. Պետրոս Սիմեոնեանցը ջանալով իւրովսանն նպաստել Տ. Տեղակալի դէմ յարուցուած աշկարայ ապստամբութեանը՝ դիմեց Սինօդին, այս վերջինին ճանաչելով իրեն իշխանաւոր, Պէտք է ասած, որ Սուքիաս և Ներսէս Սրբազնները սկզբում տատամսումէին, և հազիւ թէ իրենց բռնած սխալ ընթացքում այնչափ հեռու գնային ապօրինի գործողութիւններով, եթէ այսպէս դրսից չը լինէր դրդումն և խրախուսութիւն, Սիմեոնեանցի յայտարարութիւնը ստիպեց անել նրանց վճռական քայլ։

8 Նոյեմբ. Հրամայւումէ Մայր Աթոռի բարեշնորհ՝ գանձապահին տալ Վանական կառավարութեան ուժ հազար ռուբլի Վանքի, ձեմարանի և Տպարանի ծախուց համար, Նոյեմբեր ամսում: Անցեալ տասն ամիսների ընթացքում Վանական կառավարութիւնն սուացել է 88 հազար ռուբլի, որ ներկայ 8 հազարի հետ անումէ՝ 96 հազար:

11 Նոյեմբ. Ախալքալակ գաւառի զինուորական ատեանը յայտնել է Թիֆլիսի կոնսիստորեացին (16 Նոյեմբ. 1890 ամի թ. 596) որ Մեծ-Արակէլ գիւղի Բարսեղ քահանայ Տէր-Յովհաննիսեանցը 1869 թուի ծնուածների մետրիքական քաղուածքում ցոյց է տուել նոյն գիւղի բնակիչ Մամաս Սահակեան Յարութիւնեանին ծնուած 1869 ամի Սեպտեմբերի 21-ին, իսկ այդ ցուցակի խորանի վերջում ցոյց է տուել նոյն անձը վախճանուած, առանց մա-

Զը նայելով նախագահի բողոքին, որ «Արարատը» ինքն ըստ ինքեան չէ ենթարկում Սինօդին, այլ Կաթուղիկոսին և Տեղակալին, և սրանց հաճութեամբ միայն կարող է այդ մասին կարգադրութիւններ լինել Սինօդում: Չը նայելով և անդամների մէկի՝ Գերապ. Սարգիս եպիսկոպոսի անհամաձայնութեանը, և անցեալում պաշտօնական գրադրութիւնների տրամադրութեանց պարզութեանը, Սինօդի մի քանի անդամներ՝ մասնաւորապէս Սուքիս և Ներսէս Սրբազանները, ապօրինի օրագրութեամբ Հրամայեցին Սիմէռնեանցին շարունակել իւր պաշտօնը Սինօդի իշխանութեան տակ: Պրոկուրորը ապօրինի համարելով այս օրագրութիւնը վերադրեց: Սրբազանները աւելի էլ առաջ գնացին կազմելով երկրորդ ապօրինի օրագրութիւն, առաջինի մոքով առ ոչինչ համարելով թէ Տեղակալի և թէ Մարմնաւոր Խշխանութեան ներկայացուցչի օրինական փաստերի վրայ հիմնուած բողոքները: Այս երկրորդ օրագրից մի պատճէն, ինչպէս ընդունուած կարդը պահանջումէ, ներկայացուեց չէնց իրենց Սրբազանների գիտութեամբ պրոկուրորին: որով վերջինս գրաւոր հիմք ունեցաւ իւր բողոքը Քարձրագոյն Մարմնաւոր Խշխանութեան ներկայացնելու:

Ամենակարեւոր և անհրաժեշտ է նաև գիտենալ այն, որ յունիսի 24-ից առաջ, երբ գեռ ևս վերոյիշեալ եպիսկոպոսները չէին արել վճռական քայլ պաշտօնապէս ապօրինի ընթացք բռնելու «Արարատի» գործում: Տէր Տեղակալը ստացաւ Կովկասեան պ. Կառավարչապետից մի պաշտօնական գրու-

հուան թուականի: Քննութիւնից երեացել է, որ Մամաս Յարութիւնեանը կենդանի է, միայն թէ մկրտութեան Մամաս անունը փոխած է Աեղրակի: Ծանուցանելով այս մոտին Զինուօրական Ատեանը խնդրում է Կոնսիստորիայի տնօրէնութիւնը յիշեալ Բարսեղ քահանայ Տէր - Յովհաննիսեանցին ենթարկելու պատասխանառութեան խարդախութեան համար: Կոնսիստորիայի կողմից բացուած քննութիւնը տալիս է ճշտիւ նոյն հետեանքը, ինչ որ տուել է զինուօրական ատենի քննութիւնը, ուստի և կոնսիստորիան դիմելով Աինօդ՝ խնդրում է սրա տնօրինութիւնը Բարսեղ քահանային պատժելու համար, ի խրատ և ի զգուշութիւն ուրիշ քահանաների: Հըանացեցին. Որովհետեւ Մեծ - Արակէլ գիւղի Բարսեղ քահանայ Տէր - Յովհաննիսեանի յանցաւորութիւնը, որով նա կենդանի մարդուն ցոյց է տուել իրրե մեռած, ենթարկւում է Մարմնաւոր Խշանութեան իրաւասութեան, ուստի վերագարձնե-

թիւն (29 մայիս, 1891 թ.), որով Կառավարչապետը յայտնում էր իւր գժգոհութիւնը պաշտօնական «Արարատում» տպուած (մայիսի տետր) յօդուածի մասին, որի մէջ Կաթուղիկոսի մահուան պատճառներին տրուած էին մեկնութիւններ, այլ և յիշեցնում էր «Արարատ» հրատարակութեան պայմանները ու նպատակը, որոշուած դեռ 1867-ին Գէորգ Կաթուղիկոսի և Փոխարքայի փոխագարձ համաձայնութեամբ. Նաև «Արարատ» գրաքնընչութեան վերահսկողութեան և պատասխանատութեան ում վրայ ընկնելն էր յիշեցնում: առաջ բերելով և 1883 թ. գէպքերը և ի վերջը խնդրում էր Նորին Ամենապատութիւնից թէ արդեօք կը ցանկայ Նա իւր վրայ առնել անձամբ (լիցի) «Արարատ» վերահսկողութեան և պատասխանատութեան գործը: ինչպէս պահանջում են այդ պաշտօնական որոշմունքները, թէ ոչ: Աւելացնելով և այն, որ եթէ Նորին Բարձր Արբազնութիւնը հրաժարուի «Արարատն» իւր իշխանութեան տակ առնելուց, այդ գէպքում այդ ամսագիրը պէտք է ենթարկուի հասարակաց (արքունի) գրաքնչութեան: Խնդրում էր շուտափոյթ պատասխանել, Տ. Տեղակալը շատ կարճառօտ պատասխանեց այս գրութեանը, յայտնելով, որ ինքը, ինչպէս որ իւր Տեղակալական պաշտօնն է պահանջում: յօժար է և այսուհետեւ իւր վրայ առնել «Արարատ» վերահսկողութիւնը և անձնական պատասխանատութիւնը մինչև նոր Կաթուղիկոսի հաստատուիլը: Բոլորովին աւելորդ համարեց Տ. Տեղակալը բողոքել իւր իշխանութեան գէմ եղած ոտնձգութիւնների համար, մի կողմից տեսնելով աղջի

լով այդ գործը թիվլիսի կանսխատորիան, պատուիրել որ այդ գործի հանգամանքները ծանուցանէ կոնսխատորիան տեղական հանգամական Դատարանի դատախազին:

11 Նոյեմբ. Վերևի յօդուածում՝ յիշուածի նման, խարդախ մետրիքական քաղուածքի համար ենթարկումէ քննութեան Լոռուայ գաւառի Գիւլագարակ դիւղի Սարգիս քահանայ Տէր Սարգսեանցը, Լոռուայ բաժնի քննչի ձեռքով:

13 Նոյեմբ. Երեւանի կոնսխատորիան յայտարարութեամբ խնդրումէ Սինօդից Յարութիւն Տէր Սարգսեան Ալէքսանդրապոլյցուն ձեռնադրել քահանայ նոյն քաղաքի Ա. Փրկիչ եկեղեցու վրայ: Տէնչեռ-Ռէն. Ալէքսանդրապոլի Հոգեոր կառավարութիւնը յայտարարութեամբ (մայիս 22. թ. 1484) խնդրել է դադարեցնել քա-

գիտակից մեծամասնութեան խելացի ուղղութիւնը՝ միւս կողմից չուզելով վանական ներքին անկարգութիւններին տալ պաշտօնական կերպարանք, Այս պաշտօնական գրագրութիւնները Տ. Տեղակալը հաղորդեց Սինօդին ի գիտութիւն, մենք աւելացնումենք՝ նաև ի զգուշութիւն: Բայց դժբաղդաբար այս ազդարարութիւնը ոչ մի լաւ հետեւանք չօւնեցաւ: Յունիս 24-ի, յուլիս 12-ի օրագրութիւնները, պ. Սիմեոնեանցի յունիսի 20-ի խնդիրը, և 22-ի նոր յայտարարութիւնը ապացուցանումեն, որ Սինօդի վերոյիշեալ Անդամները և Արարատի⁴ Գործակիցը շարունակումեն ըլձանաչել Տեղակալի իրաւունքները և ըլ հնազանդել օրէնքին: Այսուամենայնիւ Տէր Տեղակալը ի յարգանս հանգուցեալ Հայրապետի յիշատակի մտադիր էր պահել Էջմիածնում պ. Սիմեոնեանցին իւր վերահսկողութեան տակ մի և նոյն պաշտօնում: որպէս զի արանով նաև փոքր ինչ մեղմած լինի իւր ընդդիմագիր պաշտօնակիցներին: Բայց ամեն զիջողութիւն և մեղմութիւն իզուր էին, երևի ընդունուումէին իրրե թուլութեան և ապիկարութեան նշան: Վերևի վաւերագրից արդէն երեւումէ, որ պ. Սիմեոնեանցը առաւ նաև արձակուրդ հակառակ Տեղակալի հրամանի, յանդգնեցաւ մինչև իսկ անձնական հրաժեշտի ներկայանալ նորին Ամենապատութեան մօտ՝ արձակուրդի թուղթը գրպանում՝ և իւր ականջով լսեց իւր պաշտօնից արձակման վճիռը: Այս էլ բաւական չէր: նա շարունակեց: Հակառակ իւր իշխանաւորի վճուի, ստանալ դեռ մի քանի ամիս շարունակ ոռջիկ իրրե Գործակից Արարատի⁵: Հարկաւ այստեղ

հանաների ձեռնադրութիւնը մինչև պարագորդ տեղ բացուիլը, որովհետեւ քաղաքում կան քահանաներ և առանց ծխի: Հրամայեցին. Որովհետեւ Աղէքսանդրապօլում քահանայի պարագ տեղ տեղայ, և առաջարկուած քահանայացուն էլ զուրկ է պատշաճաւոր ուսումից, ուստի դադարացնել Յարութիւն Տէր Սարգսեանի ձեռնադրութեան գործը, վերադարձնելով նրա վկայականները:

13 Նոյեմ: Աղէքսանդրապօլի Դահարլու գիւղի բնակիչ ջահընկալ Յարութիւն Փիլիպպոսեանցի ձեռնադրութեան գործը կարճւումէ, նրա մահուան պատճառով:

13 Նոյեմ. Ա. Էջմիածնում եղած Աւսումնարանական Վարչական Յանձնաժողովի անդամ՝ բարեշնորհ Նահապետ աբեղայ Նահապետեանը կարգուած լինելով կարսի յաջորդ՝ Հրամայեցին. նրա վոխանակ կարգել յիշեալ Յանձնաժողովի անդամ՝ բարեշնորհ Բար-

Խօսքը մի քանի տասնեակ ռուբլիների մասին չէ, որն և Սինոդից թողուեց անպահանջ: „Արարատի“ այս դէպքը, մինը այն բազմաթիւ ըմբոստական արտայայտութիւններից և ապօրինի գործողութիւններից, որ տեղի ունեցան Սինօդում վերջին վեցամսեակում, կարծումնենք բաւարար լոյս է սփռելու ընթերցողների մեծամասնութեան մէջ և դիւրացնելու է գործերի ուղիղ ըմբռնումը:

Աւելորդ չենք համարում աւելացնել և մի քանի խօսք „Արարատի“ նախկին Գործակցի կացութեան մասին էջմիածնում:

Պ. Պետրոս Սիմէռնեանցը Էջմիածնում ստանումէր Սինոդականի թոշակ, բացի Սանասարեանցից ստացած թոշակից, ապրում էր վանքի հացովն ու ջրովը, եղած բնակարաններից ամենալաւերից մէկում: Եւրձայնը վճռական էր գրեթէ բոլոր գործերում: թէ վարչական, թէ ուսումնարանական և թէ տնտեսական: „Արարատի“ խմբագրութիւնը նոյն իսկ ինքն էր: ոչ մի յանձնաժողով չը կար յօդուածների ընտրութիւնը և վարձատրութեան չափը օրոշելու համար, ինչպէս այդ առաջուց յայտարարուած էր: Այդ բոլորը կախուած էր նրա բարեհայեցողութիւնից: Եւ ոչ չէր մտածում այդ բանի դէմ բողոքել քանի որ յայտնի էր, որ այդպէս է Վեհափառ Կաթուղիկոսի բարեհաճ կամքը, Ամեն մի Թիֆլիս գնալիս, և այդ ինչպէս ինքն է ասում պատահումէր շատ յաճախ, ստանումէր ոչ միայն ամբողջ թոշակը, այլ և առատ Ճանապարհածախս (200 ռուբլի), նաև դրամական պարգևներ, չը հաշուած Կաթուղիկոսա-

գուղիմէոս վարդապետ Գէորգեանին և ձեմարանի տեսչի օգնական պ. Յովհաննէս Սաղաթէլեանին, որի մասին յայտնել ի գիտութիւն առանձին առանձին թէ վերջին երկուսին և թէ բարեշնորհ արեղային, պատուիրելով՝ որ առաջինները ստանան վերջինից բոլոր թղթերը և գրութիւնները, որ վերաբերում են Յանձնաժողովին, որ և պահուելու են այսուհետեւ բարեշնորհ բարդուղիմէոս վարդապետի մօտ:

13 Նոյեմբ. Մայր Աթոռիս «Ղուեր» կոչուած արօտատեղին, Օշականի և, Վաղարշապատի սահմանների միջև՝ աճուրդով տրուեց քուրդ Ատօ-Մոլլա Լալ - Յղաւն, երեք տարի ժամանակով, տարեկան 500 ըուբլի վարձով և մանրամատն պայմանագրութեամբ:

13 Նոյեմբ. Վարարաղի վիճակային Կոնսիստորիան զեկուցանումէ (30 մարտ, թ. 380 և 382) թէ Նուխուայ գաւառի Վարդաշէն գիւղի Ա. Աստուածածին եկեղեցին կարօտութիւն ունի եկեղեցական դպիրների և խնդրումէ որ նոյն տեղի բնակիչներից՝ Պատուական Քուշմաննեանցին և Գրիգոր Սողոմոննեանցին հանել տալ Հարկատուների դասակարգից և կարգել եկեղեցու սպասաւոր: Երկոքեանն էլ աւարտել են իրենց ուսման ընթացքը Մայր Աթոռիս ձեմարանում, վարումեն ուսուցչական պաշտօն նոյն գաւառում և ազատ են զինուարական ծառայութիւնից: Ոինօդք դիմեց Ելիսաւետոսպոլի Նահանգապետին առաքելով արձակման թուղթ և ստացաւ նրանից թոյլուութիւն, երկուսի համար

կան առանձին շնորհները: Հանգուցեալ Կաթուղիկոսը գանձարանից սովորութիւն ունէր դրամ վերցնելու յատկապէս առանձին բաշխումների համար: Մենք այս ասելով հեռու ենք բոլորովին պ. Սիմէռնեանցին շահսեր մարդ անուանելու մտքից, նա այդ բանում շատ որոշակի տարբերումէր իւր շրջապատի մօտիկ անձնաւորութիւններից, բայց կարծումնք նաև: որ նա գանգատուելու տեղիք չունի Եջմիածնում իւր ունեցած կացութիւնից, ինչպէս այդ անումէ նա իւր յունիս 22-ի յայտարարութեան մէջ:

էլ, հոգեսոր կոչումն ընդունելու։ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. վերոյիշեալ երկու ուսուցիչներին ճանաչել Ա. Աստուածածին եկեղեցու սպասաւոր։

18 Նոյեմբ. Խւր կառավարչական մասի գործերի բարւոր և կանոնաւոր կառարման համար անհրաժեշտ վարկաւ Ախնօդը յանձնել իւր անդամներից մէկին՝ Գեր. Արիստակէս եպս. Աեղքակեանին այդ Մասի գործերի վրայ հսկողութիւնը որպէս զի Նորին Արքագնութիւնը առանձինն ուսումնասիրելով ամեն կարեւը գործերը՝ զեկուցանէ Ախնօդական Ատենին։ Պատուիրուեց կառավարչական Մասի Գործավարին կարգի գնել բոլոր անսաւարտ գործերը և անկատար թղթերը՝ տեսակների համեմատ, և կատարել Նորին Արքագնութեան բոլոր պահանջները, վկատարելով առանց նրա կանխագոյն գիտութեան և ոչին։

18 Նոյեմբ. Կարեսոր դատուեց Հառիճոյ Ա. Աստուածածնի վանքի վանահայր բարեշնորհ Վիւրեղ արեղայ Վիւրեղեանցին արձակելով վանահայրութեան պաշտօնից կանչել Էջմիածին և նրա տեղը նշանակել բարեշնորհ Եղիշէ վարդապետ Ամատունուն։

22 Նոյեմբ. Երեւանի թեմակալի փոխանորդ Գեր. Գրիգոր եպս. Գառնակերեանցը յայտարարութեամբ դիմեց Ամենապատիւ Տեղակալին (14 Հոկտ. թ. 330) որի մէջ ասուած է. Երեւանի կոնսիստորիան այս տարուայ Յունուար և Մարտ ամիսներին, համար 11, 172, 211 և 279, դիմելով Ախնօդին մի ըստ միո՞ւէ ստորագրել է իւր աննախանձելի դրամական դրութիւնը և խնդրել է դրամական միջոց տալ մի գործավար և մի գրագիր աւելացնելու համար։ Մայիսի 10-ին № 1791 ստացել է բացառական պատասխան, հիմնուած այն պատճառաբանութեան վրայ, թէ Զինուուրական Ատեանների բացումով գործերի և գրագրութիւնների թիւը աւելացել է ոչ միայն Երեւանի այլ և բոլոր Առուսաստանի Հայոց կոնսիստորիաներում, ուստի հրամայւում է կառավարուել անտրտունջ սահմանուած շտատով, առանց ակնկալութեան մի աւելի գործավար կամ գրագիր ունենալու։

Ա. Աինօդը բնաւ ուշադրութեան չէ առել եկեղեցիների, քահանաների վաճիքերի, Հոգեոր կառավարութիւնների, զինուորակութեան ենթարկուողների և վերջապէս հայ բնակիչների համեմատական թիւը Երեանի թեմում և միւս վիճակներում։ Բոլոր մնացած վիճակներում հաղիւ այնպատի հայ բնակիչ կայ, որչափ միմիայն Երեանի թեմում։ Ասարախանի, Շտոխտու և Բեսսարաբիայի թեմերում հաղիւ 150 հայ եկեղեցիք կան, մինչդեռ Երեանի թեմում հայ եկեղեցիների թիւը հասնումէ 664-ի։ Խնդրում է Ամենապատիւ Տեղակալից առաջադրել Աինօդին, լցուցանել Երեանի Կոնսիստորիայի կարիքը, աւելացնելով գոնչ 300 բուրզի Ռուս լեզուի վարժ մի գրագրի ոռձիկ։ Տէր Տեղակալը այս յայտարարութիւնը մակագրութեամբ յանձնեց Աինօդին, որ և յարգուեց։

22 Նոյեմբ. Պատուիրեց Հին Նախիջևանի Հոգեոր կառավարութեանը Նախավիլայի վաճիքի Աստապատ գիւղում ունեցած 30 խալուար վարելահողը տալ կապալով օրինական աճրդախօսութեամբ։

22 Նոյեմբ. Ալէքսանդրոսլիի Երկասեան եկեղեցական օրիորդաց Արդութեան գպրոցի հոգաբարձութեան յայտարարութեան համաձայն տնօրինեց Աինօդը պահանջել Մեծ Միքայէլ Սահակեան գնդապետից Թիֆլիզի Կոնսիստորիայի ձեռքով, յիշեալ գպրոցին հասանելիք 15 հաղար ռուբլին, որ վերջին ցատացուած մնացորդն է Երջանկայիշատուկ իշխան Ղաջրաման Երկայնաբազուկ Արդութեանցի յիշեալ գպրոցին կտակած 40 հաղար ռուբլու։

23 Նոյեմբ. Ամենապատիւ Տեղակալը հաւասար միւս անդամների Աինօդի ստանումէ թոշակ ամսական միայն 50 բուրզի, մինչդեռ նրա բարձր պաշտօնը անհրաժեշտ ծախքեր է պահանջում։ ուստի հրամայեցին։ յաւելու Նորին Բարձր Արբազնութեան տարեկան թոշակի վրայ այլ ևս 600 բուրզի, մինչեւ նոր կաթողիկոսի գալուստը։

25 Նոյեմբ. Օշական գիւղի կառավարիչ Մեխակ Երամեանցին տրւումէ իրաւունք պահանջելու նոյն գիւղի բնակիչներից նաև այս 1891 թուի ծխահարկն ու այգեհարկը:

—
25 Նոյեմբ. Մայր Աթոռոյս միաբան շնորհունակ Գարեգին Արկաւագը կարգումէ անդամ Տպարանական ժողովի և միանգամայն սրբագրիչ «Արարատ» ամսագրի և այլ տպագրելի մատեանների:

—
25 Նոյեմբ. Առւրք Աթոռի Մատենադարանապետ Գերապատիւ Ներսէս Արքազան Եպիսկոպոսը Բարձրագոյն Հրամանով արձակուած լինելով բոլոր պաշտօններից, արժան դատուեց մատենադարանապետութեան պաշտօնը յանձնել Մատենադարանապետի օգնականին՝ բարեշնորհ Սահակ արեղայ Ամատունուն: Այլ և յանձնել Աինօդի Անդամ Գեր. Արիստակէս Եպս. Դաւթեանին ցուցակով բոլոր գլքերը յանձնել նոր կարգուած Մատենադարանապետին և այդ ցուցակի մի օրինակը Երկուսի ստորագրութեամբ մատուցանել Աինօդին: Այլ և կազմել մի առանձին ցուցակ պակասած գլքերի և իրերի:

—
25 Նոյեմբ. Հրամայուեց Երեանի Կոնսիստորիային անրդախօսութեամբ կապալով տալ, լիցամեայ Ժամանակովի, աթոռապատկան «Նորագիւղի» այգին:

Կուրօն ունի պատահ ուղարկութեամբ մատուցանել. Այսու 22 միջազ Ու մասին մարտնի խորհ Ֆեամառ Արամի կը մասնաւ և պարզած աշխատանքն ուղարկած զնուած այս ուղարկի մասնաւութեամբ պարզ մերս բարձրացաւ Հայութ Արքունի կառաւ. Այս աշխատ ուժ մասին Արքուն ՈՒ և այս աշխատ մասնաւ մասնաւթեամբ հարժիք